




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

61(47.925)08
2-85

(III)

Գ. Մագիստրոսը վորպես XI գ. հայ բժեկ. Գեղ. Բժ. Լ. Հովհաննիսյան

նոթութիւնը բժշկութեան, կենդանարանութեան, բուսարանութեան, պատմութեան, փիլիսոփայութեան և ուրիշ գիտութեաններին հետ: Այդ նշանները շուրջը նա շատ արձակ դատողութեաններ և անուս: Նախ քան անցնելը մեզ հետաքրքրող հարցերին — Մագիստրոսի բժշկական բովանդակութիւնն ունեցող թղթերի թարգմանութեանը — կանգ առնենք Մագիստրոսի կենսագրութեան վրա:

Գրիգոր Մագիստրոսը ծնվել է X դարու վերջում Պահլավունյաց փառափոր իշխանական տանը: Մագիստրոսը հայտնի սպարապետ Վահրամ Պահլավունու յեղբորվորդին էր, այն հռչակավոր սպարապետի, վոր յերկար տարիների ընթացքում Բագրատունյաց թագավորութեան հզոր նեցուկն էր արտաքին պատերազմներում: Սելջուկների արշավանքի ժամանակ արդեն 80 տարեկան հասակում Վահրամը վերջին անգամ հայրենիքը փրկելու համար բարձրացրեց իր սուրը, բայց ուժեղ ճակատամարտի մեջ, պատերազմի դաշտում, ընկավ իր վորդու Գրիգորի հետ Դվինի պատերի տակ: Հափանահան և, վոր Մագիստրոսը ծնվել է իր հայրական կարվածքում՝ Բջնիում, բայց իր ժանկական և յերիտասարդութեան տարիները նա պետք է անց կացրած լինէր Անիում, վորտեղ մինչև այսօր լուռ կանգնած են Պահլավունյաց հոյակապ տաքարանքների վառատակները: Մագիստրոսը ստացել է շատ ընտիր կրթութիւն: Յեղեղ և նա արդյոք հունաց գիտական կենսորոններում՝ իր կրթութիւնը շարունակելու համար, այդ մասին, զժրախտարար, վոչ մի ցուցմունք չկա: Բայց հայտնի չէ, վոր գեւ յերիտասարդ տարիներում նա շատ հմուտ էր հոգեսր գրականութեան, հույն իմաստասիրութեան, քերթողութեան և այլ ժամանակակից գիտութեանների մեջ: Իր յերիտասարդութեան ժամանակ Մագիստրոսը զբաղված էր շինարարութեամբ, նա կառուցեց Հայաստանի դանաղան մասերում մի շարք վանքեր և Սանահինի հայտնի ճեմարանը, վորոնք միջնադարյան Հայաստանում գրեթե միակ գիտական կենտրոններն էին: Այդ վանքերը մեծ մասամբ պահպանել են իրենց գոյութիւնը մինչև այժմ էլ, մի շարք հետաքրքրական արձանագրութեաններով հանդերձ:

Հովհաննէս Սմբատի համեմատաբար շատ խաղաղ թագավորութեան ժամանակ Մագիստրոսը հիմնել էր իր ճեմարանը, վորտեղ, ինչպէս այդ յիրեւում է նրա թղթերից, ուսուցանում էր դանաղան գիտութեաններ: Մագիստրոսը ունեցել է բազմաթիւ աշակերտներ, վորոնցից մի քանիսը հետագայում ականավոր գիտնականներ և հոգեսրականներ դառան: Թե ինչ գիտութեաններ էր դասախոսում Մագիստրոսը իր ճեմարանում՝ պարզ հայտնի չէ, բայց յիրեւում է, վոր այդ գիտութեանների շարքում բժշկութեանը վերջին ցեղը չէր զբաղւում: Մենք կտեսնենք հետո, վոր Մագիստրոսի թղթերից մեկը նույն իսկ մի դասախոսութիւն է մարտոգական օրգանների ֆունկցիայի մասին: Մագիստրոսի այն թղթերը, վորտեղ նա գտնադան բժշկական հարցեր և շոշափում, վկայում են հեղինակի քաջ ծանոթութեանը բժշկութեան ամենանշանավոր ներկայացուցիչների գիտական աշխատանքների հետ: Նա հաճախ տալիս է Հիպոկրատեսի, Գալենի, Աս-

(IV)

Հայաստանի Ս. Խ. Հ. Պես. Համալսարանի գիտական սեղեկագիր

կընդդիմելու, Ռուֆուսի և ուրիշների անունները: Դժբախտաբար, Մազիստրոսի կյանքի այդ շրջանի մասին վոչ մի ուրիշ մանրամասն տեղեկություն չկա, ուստի մեր միջնադարյան բժշկությունը պատմությունը ամենահետաքրքրական եջերից մեկը մեզ համար ներկայումս անհայտ է մնում: Սակայն կասկած չկա, վոր այս շրջանը նրա զբաղման աշխատությունների տեսակետից շատ բեղմնավոր էր: Հեղինակի թղթերի մեծ մասը գրված են յեղել հենց այդ ժամանակները, յերբ Մազիստրոսը հեռու մնալով քաղաքական գործերից՝ ամենայնուհանդերձ կերպով մտավոր աշխատանքներով էր զբաղվում: Նրա խաղաղ գիտական գործունեությունը ընդհատվեց Բագրատունյաց պահի շուրջը ծագած ազդամիջյան պատերազմով: Ուրիշ ֆեոդալների հետ միասին Մազիստրոսը փոխեց գրիչը սրի, վորպեսզի գահը բարձրացնի Բագրատունյաց որդիավոր թագավոր Գագիկ Բ.-ին: Ծագեց պատերազմ, վորտեղ Գրիգոր Մազիստրոսի բանակը խոշոր դեր խաղաց Պահլավունյաց իշխանի տոհմական Բջնի ածրոցի մոտ: Ազդասերները հասան իրենց նպատակին և բարձրացրին Գագիկին հայոց գահը: Սակայն մի առ ժամանակ հետո՝ թագավորի և Մազիստրոսի մեջ ծագեց խորը պատու-թյուն, վորի պատճառով վերջինս ստիպված յեղավ թողնել իր հայրական հողերը և հեռանալ Տարոն, վոր Բագրատունյաց թագավորությունը ռազմա-ններից դուրս էր գտնվում: Այնուհետև հույները, համոզվելով վոր ուժով Անիին տիրանալը գրեթե անկարելի մի գործ է, և անընդհատ շարունակելով իրենց վտանգավորությունները Բագրատունյաց թագավորությունից դեմ, հրավիրեցին Գագիկին Կ. Պոլիս, վորտեղ և դավաճանորեն կալանավորեցին նրան: Այդ միջոցին Գրիգոր Մազիստրոսը մոտանալով անցյալը, հույս գնելով հույների վրա ունեցած իր ազդեցության, շտապեց Կ. Պոլիս՝ գալիք վտանգի առաջն առնելու համար, բայց՝ չնայած վոր Մազիստրոսը շատ լավ ընդունելություն գտավ հունաց արքունիքում, նրան չհաջողվեց փրկել Բագրատունյաց թագավորությունը անկումից, վոչ ել իր վաղեմի թշնամու գրությունը բարելավել: Գագիկը զրկվեց իր թագավորությունից և Անին անցավ հույների ձեռքը:

Հունաց արքունիքում յեղած ժամանակ Պահլավունյաց իշխանը ստացավ Մազիստրոսի կոչումը, վորը ղինվորական ամենաբարձր աստիճանն էր, և մի քանի ուրիշ պալատական աստիճաններ, ինչպես պատրիկի, դուքսի և այլն: Չնայած այդ բոլոր պատիվներին, Մազիստրոսը՝ ապրելով աշխարհիս գիտական կենտրոնում, շարունակ իմաստասիրությամբ էր զբաղվում: Իր թղթերի և աշխատանքների մի մասը նա գրել է Պոլիս յեղած ժամանակ:

Մազիստրոսը հանձնում է հույներին իր հայրենի կալվածքը Բջնիում վորի փոխարեն հունաց կայսրը նշանակում է նրան արեվելյան Հայաստանի նահանգների կառավարիչ և պարզեում է նրան Միջագետքում բանագան քաղաքներ և գյուղեր: Ընդունելով այդ պաշտոնը՝ Պահլավունյաց իշխանը անմիջապես անցնում է իր ծառայության տեղը: Նրա թղթերից յե-բեռն է, վոր պաշտոնական գործերը շատ եյին ձանձրացնում նրան, խան-

(V)

Գ. Մազիստրոսը վորպես XI գ. հայ բժեկ. Գեղ. Բժ. Լ. Հովհաննիսյանի

գործերով նրա մտավոր աշխատանքներին: Համեմատաբար մարդասիրությամբ կառավարելով իր յերկիրը, Մազիստրոսը միշտ ժամանակ էր գտնում գրական հեղինակություններով պարագելու: Նա վախճանվեց 1058 թ. և հավանորեն թաղված է այժմյան Հասան-Ղալայի մոտ Ս. Աստվածածնա վանքում:

Պահլավունյաց իշխանը թողել է մի քանի ինքնուրույն և թարգմանական գրվածքներ, վորոնց մեջ գլխավոր տեղը գրավում են նրա թղթերը: Ինքնուրույն գրվածքների շարքումն է և նրա գրարարի քերականության մեկնությունը և 1016 տողյա վտանգավորը. թարգմանական գրվածքներից՝ Պղատոնի Տիմոսը, Ֆիդոնը, Յեվկլիդեսի յերկրաչափությունը, Կալիմախոսի և Անդրոնիկոսի վիպասանությունները, Ուլիպիդորոսի և ուրիշ հույն հեղինակների գրվածքները: Մազիստրոսի թղթերի բովանդակությունը կազմում են զանազան կրոնական, իմաստասիրական, բնագիտական, բժշկական և ուրիշ գիտական հարցեր, վորոնք պարզապես վկայում են թե հեղինակի ուսումնականության աստիճանի, և թե ժամանակակից հայ բարձր գասակարգի մտավոր կյանքի և զարգացման մասին: Մազիստրոսը չի գրել դուռ բժշկական գրվածքներ, ուստի նրա նշանակությունը պարզելու համար հայ բժշկության պատմության առաջ, մենք կանգ կառնենք նրա այնպիսի թղթերի բովանդակության վրա, վորոնք բժշկական նշանակություն ունեն: Նրա 87 թղթից մենք գտանք տասից ավելի, վորտեղ Մազիստրոսը բժշկության մասին և խոսում է: Մի բան պետք է մենք այստեղ շեշտենք—կարող է պատահել, վոր Մազիստրոսի մեզ հետաքրքրող հատվածների մեր աշխարհաբար թարգմանությունը բավարար չճանաչվի: Մենք մեզ բոլորովին ձեռնհաս չենք համարում լեզվագիտական հարցերում, ուստի կարող է պատահել, վոր տեղ-տեղ մենք չկարողացանք մոտենալ Մազիստրոսի արտահայտած նյութերի բուն նշանակությունը: Համենայն դեպս Մազիստրոսի թղթերի մեր թարգմանությունը յերկարատե աշխատություն արդյունք է, և յիթե տակավին ճանաչվի, վոր այդ բանը մեզ չի հաջողվել, կարող ենք ասել, վոր ամենալավ հայագետները հաճախ չեն կարողացել պարզ ըմբռնել Մազիստրոսի խրթին լեզվով արտահայտած մըտքերը:

Անցնենք Մազիստրոսի այն թղթերի բովանդակությանը, վորտեղ հեղինակը բժշկական հարցեր է շոշափում:

Կյուրակոս հույն գալին գրած թղթի մեջ Մազիստրոսն ասում է հետևյալը.—մի որ, յերբ Կյուրակոսը մարդկանց բազմություն մեջ հրապարակորեն իմաստասիրությամբ էր պարապում, Մազիստրոսի տված մի հարցին նա պատասխանում է, վոր նրան չի հետաքրքրում վոչ յերկինքը, վոչ արեգակի, լուսնու և աստղերի ընթացքը և նրանց գործողությունը, վոչ տարրերը,*) վոչ ծովը, և վոչ ել յերկիրը իր բուսականությունը հետ, այլ

*) Այստեղ Մ. ակնարկում է այն չորս տարրերի մասին, վորոնցից կազմված են ըստ ժամանակակից հասկացողությանների յերկրի բոլոր նյութերը:

հետաքրքրում է միայն մարդկանց ազդեցության գործողությունը, թե ինչպես են մարդու փչացած նյութերը արյուն դառնում և բաշխվում նրա որգանիզմի մեջ: Մագիստրոսը հանդիմանում է հույն գաղղին նրա մանկական անտեղեկության պատճառով, իրեն համեմատելով Սիսալիոս բժշկի հետ, վերը ժամանակին նույնպես հանդիմանում էր իր մանուկին: Իր հակառակորդի մասին Մագիստրոսը խոսում է միշտ հեղնությամբ, շեշտելով նրա տղիտությունը գիտական հարցերի մեջ:

Համեմատելով արտաքին բնությունը մարդու որգանիզմի հետ, վորպեսզի հաստատի, վոր այդ յերկու տարրերը ըստ իրենց էություն չի կարելի միմյանցից բաժանված համարել, և նրանց մեջ միշտ կարելի չի նմանություններ գտնել, նա ասում է.

«Յերկրի խեղադատակն ունի յուր գորավոր նշանակությունը: Այդպես ուղեղի յերակները համապատասխան են հինգ աստղերին, *) և ամբողջ մարմինն մատակարարում են գիտակցության տարրը. յերկու աչքերը համապատասխանում են արեգակին և լուսնուն, կրկնակի և միակի զգայարանները՝ այն աստղերին և այն տարրերին, վոր իբրեք թե փչելուց են են գոյանում, նմանելով յերբեմն բերանի գոլորշուն: Յուրաքանչյուր համապատասխանում է հյուսիսին, վոսկորները մետաղներին, ջիլերը արմատներին, յերակները գետերին, վորովայնը՝ ծովին, մորուքը և մազերը՝ կոտորելի ծառերին, մարմնի մանր մազերը՝ բույսերին, ամբողջ մարմինը՝ հողին, շնչառությունը՝ ողին, սեռականը՝ ջրին, իսկ սննդից առաջացող տաքությունը՝ հրին: Բայց քանի վոր քեզ հետաքրքրում են միմյանց մարսողական գործարանները, և թե ինչպես է սննդատու կերակուրն փոխվում արյան, թե ինչպես է դուրս մղող գործությունը յուրաքանչյուր գործարանը աշխատում դուրս հանել նրան (սննդատու նյութի փացորդը), թե ինչից է, վոր այնպիսի նուրբ և քնքույշ գործարան, ինչպես մարսողականն է, զիմանում է (սննդական նյութերի) յերկարատև գոգուիչ ազդեցությանը, այդ քո մանկական ուժերը չեն կարող լուծել: Դու չգիտես վոր Ստեղծիչը նրան ուրիշ որգաններից նուրբ կամ վատ չի ստեղծել: Յեվ թեպետ յուրաքանչյուր գործարան իր հատուկ բնական գործողությունն է կատարում, այս գործարանը (մարսողականը) իր բնական գործը շատ գորավոր կերպով և ճշտությամբ և տանում, վորովհետև Աստված ստեղծել է սրան քնքույշ կերպով ջրերից հյուսված, բամբակի լավ մանվածքի նման, և ծածկված բազմաթիվ շատ նուրբ յերակներով: Բնությունը ցրտի ազդեցությունից պահպանելու համար ստեղծել է ստամոքսը ավազանի կամ կավի ամանի նման, վոր պահպանվում է ուրիշ գործարանների կողմից, վորպեսզի կարողանա գիմանալ կենդանական և սննդական հրին, յերկր կամ լիզիի տաք արյան ազդեցությունը:

*) Այսինքն մոլորակները. մի ժամանակ գիտությունը նանաչում էր միայն հինգ մոլորակ՝ Սատուրնը, Մարսը, Մերկուրիոս, Վեներա, Յուպիտեր:

«Յեվ այսքանը համառոտ կերպով չես ուղեցի քեզ հասկացնել, բայց յեթե դու ցանկանում ես քո ծերությանդ հասակում մանուկի նման ուսանել, կարգա Գալենի յերրորդ մատյանի չորրորդ գլխում յեղած դյուրահասկանալի դատողությունները կաղեմիաների մասին, վորտեղ բացատրվում է մարդու կազմությունը. կամ կարգա Սիսալիոսի աշխատությունները, վոր պատմում է սերմնառություն էություն մասին յուր առաջին մատյանում, վորը ճշմարտախոս է համարվում:

«Բայց յեթե բոլոր ասածիցս ցանկանում ես համառոտ գտնել, քանի վոր այժմ դու հոգնում ես նույն իսկ զբոսնելիս և տարակուսված ես ծանր մտքերով, վերցրու կարգա ուշադրությամբ և լուրջ մտածելով Գրիգոր Նյուսացու գլխավոր մատյանը (մարդու) կազմության և բնության մասին, և այնտեղ դու ամեն բանի մասին բավականաչափ կգտնես: Մենք սովորությունն չունենք գողարար այլ մարդկանց ոտար խմաստությունը մեզ վերադրել, և քո չափազանց տղիտությունն է ստիպում մեզ այդ անել:

«Ինչու ես դու զարմանում մեր մարդկային մարսողական գործողությունների վրա, վոր զանազան կերակուրներից սնունդ են տալիս մարմնին համապատասխան նրա պահանջներին, յերբեմն ուրիշ գործարանների ոգնությունը, կամ շնորհիվ գիտակցության, բժշկության, արհեստների և զգեստների»), կամ պահվելով վրանի տակ, կամ ծաղկած բուրաստանում: Այդպես ամեն հնարավորություններով, վորքան կարող ենք, մենք պահպանում ենք գիտակցություն մեր մարմինը, ոգնելով մեր աղիքների գործողությունը, վորպեսզի ուրիշներն էլ հետեն մեզ:

«Հարկավոր չե՞ արդյոք, վոր դու ավելի շատ զարմանաս թոչունների վրա, մանավանդ մի հատուկ տեսակ աննման և անհարմար կերպով ստեղծված պարսկական հավի, վոր մարմնի զանազան մասերում ունի բազմատեսակ փետուրներ, կամ մի այլ տեսակ թոչունների վրա, վորոնք յուրաքանչյուր տարի նորոգում են իրենց նոր և գեղեցիկ փետուրները ըստ (վորոշ) կարգի, այլ վոչ թե միաժամանակ, վորպեսզի ուժապատ չսողան զյուրահաս թշնամիների առաջ. և յեթե դու մանրամասնորեն ուսումնասիրես այդ հարցերը, դու կտեսնես, վոր այդպիսի բազմատեսակ անհասանելի իրոք գոյություն ունեն: Այդպես են մտակերները, վայրենի հավերը, չորկոտանիք, բոլորը սկսած մի յեղջյուրավորներից՝ մինչև խխունջն, արծվից մինչև ճնճղուկը և չղջիկը. և պետք է իմանաս, վոր սրանք բոլորը մարսողական գործարանների միջոցով են կերակրվում և այդպիսով պահպանում իրենց կենդանությունը:

«Յեվ միթե դու չես զարմացել վոչ ճնճղուկների վրա, վոչ էլ ուրիշ տկար տեսակ հավերի, այլ միայն մարդկանց աղիքների վրա, վոր իրենց միջից են ստանում յերկնային և յիրկրային գործությունը, մանավանդ այն տեսակը, վորի շնորհիվ նա ստեղծվել է:

*) Այստեղ բնագրի մեջ գտնում ենք «տամբը» բառը, վորի իմաստը մենք չհասկացանք, ուստի դուրս թողեցինք այդ բառը մեր թարգմանությունից:

«Ինչպես և հարկավոր կերակրել յուրաքանչյուր գործարանը ըստ ամեն մեկի բնության և ձևի: Ինչից և պատահում, վոր զանազան ծառերը սնունդ են ստանում միևնույն պարտիզում, միևնույն հողից և ջրից, և միաժամանակ ծառի ամեն մի պտուղը մեկը մյուսից անկախ միշտ առաջ է՝ բերում իր բնության հատուկ գործությունը. այսպես են բույսերը և արմատները, վոր բանում են միևնույն տեղում: Քանի վոր մեր մարմնի պատկերը, կերպարանքը և անդամների ծագումը սերմնաբույսերից հետո, ինչպես և պարտիզում, գոյանում են միևնույն տեղից, և յուրաքանչյուր տարրը ունենում է իր հատուկ բնությունը և ձևը. թեպետ մենք ծածկված ենք միևնույն մորթով, սակայն մենք ունենք մեր մեջ ցուրտը և ջերմը, ինչպես և լյարդն ու փայծաղը, վոր գործություն են տալիս մարմնին, կերակրելով նրան միևնույն արյունով: Քանի վոր յուրաքանչյուր տարրը քարշողական գործությամբ և ստանում (արյունը) համեմատ յուր պահանջներին, նույնպես և արտաքս հանող գործությամբ և դուրս տանում նրան: Այդ վոչ թե միայն մեր մարդկային բնությանն և հատուկ, այլ ամենայն կենդանիների. և այս այսքան:

«Բայց յես ցանկանում եմ քեզ ազատել քո տկար մտքերից, վորովհետև քո շփոթությունը հասել է քեզ առաջուց, ձեռնարանական հոգով չկրթվելու պատճառով, քանի վոր այժմ գիտությունը ուսանում են ըստ Սոկրատեսի և Պլատոնի...»:

Գ. Մագիստրոսի այս տողերից մենք տեսնում ենք, վոր նրա և հույն դպրի մեջ ծագել է սուր բնույթ ստացած մի գիտական վիճաբանություն: Թղթի առաջին մասում հեղինակը առաջ է բերում զանազան ընդհանուր տվյալներ մարդու բնախոսությունից, վորտեղից յերևում է նրա ներհուն հմտությունը գիտության մեջ, ի հարկի իր ժամանակակից սահմաններում: Փոքրը ինչ հեգնորեն և ծաղրաբար Մագիստրոսը առաջարկում է իր հակառակորդին ուսանել վեճի նյութերը զանազան գրքերից, ի միջի այլոց և համառոտ աշխատություններից, վորից յերևում է վոր նա իր հակառակորդի ուսումնագիտության մասին շատ վատ կարծիք ուներ: Թղթի յերկրորդ մասում հեղինակն իր հատուկ ծանր լեզվով խոսում է այն պաշտպանողական միջոցների մասին, վոր բնությունը տվել է կենդանի որդանիգմներին, մասնավորապես մարսողական որդանին: Նա բերում է որինակներ կենդանիների կյանքից, վոր պիտի ապացուցի բնության խմաստը այդ թանկագին հատկությունները կենդանիներին բաշխելու գործի մեջ, ինչպես և մարսողական գործարանների նշանակությունը կենաց սնունդ և գործություն պահպանելու գործում: Հեղինակի բնագիտական դատողությունները թեպետ և թույլիկ, բայց հետաքրքրական են և գալիս են հաստատելու, վոր Մագիստրոսը հարցին շատ լավ էր տիրապետում: Վերոհիշյալ հաավածից հետո Մագիստրոսը յերկար խոսում է զանազան այնպիսի հարցերի մասին, վորոնք շատ էլ մոտ չեն նյութի իսկական ելույթյանը. վերջացնում է նա իր թույլիկ այսպես՝ «վորպես սերմն պարունակում է իր մեջ յուրաքանչյուր անդամների բնությունը և գործությունը, այնպես էլ կերակուրը պարունա-

կում է իր մեջ ամենայն անդամների գործությունը, վորի շնորհիվ նա բաշխում է գործարաններին նմանագույն տարրերը: Այսպես, պարզ, խտակ և ամենանոսր տարրերը նա հատկացնում է ուղեղին, սրտին, լերգին և ուրիշ անդամներին. դառն և դեղին ջուրը լեղին, մնացած սև և թանձր մրուրը՝ փայծաղին, ջուրը փամփուշտին, և սրանք բոլորը քամվելով մաքրվում են և քամվելուց հետո մնացած մասն լերդի մեջ արյուն է դառնում. բայց յեթե լեղին չոգնի աղիքներին, այն ժամանակ վերջինիս միջանցքով (միջի նյութը) չի կարող դուրս հանվել. և յերբ թթու և փոթոթ մասերը փայծաղը ձգում է աղիքների մեջ, կերակուրը ընդունելու կարիքը միանգամայն անցնում է: Մեր կողմից քեզ ուղղված այս սակավ խոսքերը այն նշանակություն ունեն, վոր ծանոթացնեն քեզ հարցի հետ: Թեպետ մենք յերբեմն թարգմանում ենք ձեր (հելլենացոց) աշխատությունները, բայց այժմ յես ստիպված եմ քեզ ուսուցանել ինչպես վոր մեղուները սովորություն ունեն ծաղիկների փոշին ժողովիլ և քաղցր և համեղ կերակուր մատուցանել. և այս այսքան»:

Այս թղթի թարգմանությունը հաստատում է մեզ, վոր Մագիստրոսը ծանոթ էր հելլենական բժշկության հետ իբրև իսկական մասնագետ. նա շարունակ առաջ է բերում ամենանշանավոր հին բժիշկների աշխատություններից քաղած մտքեր կամ կարծիքներ, վորոնց անունները նա շարունակ հիշում է իր թղթերի մեջ: Կյուրակոս հույն դպրին ուղղված այդ թույլիկ, ինչպես մենք տեսանք, պոլեմիկ կերպով կազմված մի դասախոսություն է մարսողական որդանների ֆունկցիայի մասին: Կյուրակոսի անձնավորության մասին տեղեկությունները պակասում են, թղթից յերևում է միայն, վոր նա նեղ մասնագետ բնախոս էր, հետաքրքրվում էր միմիայն մարսողական որդանների աշխատանքով, վորի մասին նա դասախոսում էր հրապարակորեն: Հավանական է, վոր Կյուրակոսը ապրում էր Անիում հենց այն ժամանակ, յերբ Մագիստրոսը այստեղ գիտական աշխատանքներով էր զբաղվում:

Գրիգոր Մագիստրոսը յիդել է վոչ միայն թեորեոսիկ, այլ և գործնական բժիշկ, ի հարկի վոչ այժմյան հասկացողությամբ, վորովհետև Պահլավունյաց բարձր ծագումը հաղիվ թե թույլ տար նրան ըստ ժամանակի աշխարհայեցողությունների գործնական բժշկությամբ պարապել: Բայց բնատիր հասարակության մեջ, ինչպես յերևում է նրա թղթերից, նա յերբեմն գործնական բժշկական խորհուրդներ է տալիս: Այդպես մի վոմն Մարգիս գիտնականին գրած թղթի մեջ Մագիստրոսը վերջինին բժշկական խորհուրդներ է տալիս նրան պատահած ջերմի պատճառով: Տեղեկանալով վոր այդ Մարգիսը ստացել է «խմեոիական ջերմություն վոր ի սյունիքոսականին տրամակայի», այսինքն խորհրդական հյուծող ջերմի մի տեսակը, և վոր նա ցանկացավ աջ բազուկից արյուն հանել, բայց հետո հանկարծ դարձուրեց այդ միջոցից. Մագիստրոսը բացատրում է Սարգսին, թե ինչ է նրա հիվանդության ելությունը, և ինչ վատ հետեանքներ կարող է նա ունենալ: Այստեղ նա հիշում է նույն «եպիդեմիական տրամաբանություն»

մատյանը, վորի մասին նա գրել է Կյուրակոս հույն դպրին: Պարզելով Զոգիակոսի փոփոխությունները աղոթյալությունը անող թյուրքական վրա, նա ասում է՝ «նրանք (այսինքն հիվանդները) ստանում են տանջող, այրող մաղձ, վորը գրգռում է նրանց: Այնուհետև առաջ է դալիս սեռամաղձ մանրա, դանդաղընթաց և վատնազավոր, և առաջ բերում արյունահոսություն: Հիվանդին կերակրելու համար տալիս են միայն թթու և տաք միջոցներ, վորովհետև մաղձն սկսում է պակասել և ոգուտ է տալիս թե հիվանդ կողքին և թե փայծաղին: Այդ բանի մասին Հրաշալին*) գգուշացնում է ասելով. յեթե այս փոփոխությունը քեզ չառողջացնի, հազիվ հազ դու կենդանի կմնաս. և յեթե պատահում է մեկի կյանքում այդպիսի հիվանդություն, նա հալվում է և ծյուրվում, դառանցում է և խելքը կորցնում: Ուստի յես աղաչում եմ Տիրոջը, վոր նա քեզ պահի առողջ մտքով և տա քեզ հոգու և մարմնի առողջություն: Առողջ յեղիր»:

Ինչպես յերևում է, Գրիգոր Մագիստրոսը այդ նամակը գրել է հասցեատիրոջը համոզելու համար, վոր նա համաձայնվի արյուն թողնել, քանի վոր հիվանդությունը հակառակ դեպքում կարող է այսինչ կամ այնինչ վատնազավոր հետևանքներ ունենալ: 25-րդ թղթում Գրիգոր Մագիստրոսը պատմում է «առ հայրն սրբոյ Կարապետին Սարգիս և առ այլ եղբայրսն» յուր վորդու ծագիկ հիվանդություն մասին. հիվանդ մանուկի անկողնի մոտ սիրող և տանջվող հոր հոգեբանությունը հանդերձ, թղթի մեջ մենք գտնում ենք բժիշկներին հատուկ որոշելով մոմենտներ: Ահա մի քանի տողեր այդ թղթից, վոր բերում եմ անփոփոխ ըստ բնագրի՝ պատկերացնելու համար Մագիստրոսի հասուկ վոճը և լեզվի ծանրությունը.

«Էհա՛ս նմա պատահ խոթությունն սիւնիքոսական ջերման, և առժամայն ամբարձեալ գոլորշի սաստիկ յուզման կոհակացն եռացելոյ արեանն ի խելապատակն, յեղափոխէր զնա ի մտաց և անձանթոթս զմեզ տոնէր, և այս հասանէր ի ձորակ միջ ագարակի»... «Եւ բորբոքեալ եռանդն ջերմանն ձեպէր զնա, մինչև ծանուցեալ մօր իւրոյ, եկն առ նա, և զլնչ արդեօք մօրմօքումն այրեցման և կիզման մերոյս ծնողական աղիղի գրել քեզ հաւանիմ. քանզի առաւել քոյ ընդ մեզ կիզեալ և տոչորեալ հանդերձ բորբոքիստապագեաց եղբայրքդ»... «Ապա բորբոքումն եռանդիսն հրացեալ կայծակման, զիւրն վերբուսուցանէր ծագիկ զնախահօրն սերմանեալ իւրոյ վատաւոյց, և զայն սրբան և սրպիսի, իբրու գկարկառ վիմաց և հուզ միմեանց հարթ և հոյժ կարկառեալ, անտեղի թողլով ի նմա մինչև զմիոյ նշմարելոյ կառուցանելոյ մայրի առդան, և փքացեալ իբրեւ զտիկ հոգմով ուժգնակի փչմամբ անբարբառ և անտես յաչաց զնա առժամայն գործէր և անյուստի ամենեցուն զնա ի կենաց գիտել»... «Իսկ ստուգեալ յանեաց և ճշմարտութեամբ հավատոյ ոչ ստել ի Բրիտոս, զի ձերդ զօրութեամբ հայցուած է ինդրոյ յայնմ աւուր իսկ վերարծարծեաց զնա, և նիբեաց անտանկի բորբոքումն հրացեալ ախտին: Եւ յուսամ և հավա-

*) Այդպես և Մագիստրոսը անվանում Գալենին:

տամ, զի զօրութեամբ ի մեռելոց յարուցեալ ձեր զնա, հրաշագործեալ ի մեզ ներողութեանն Աստուծոյ այն, որ յամենայնի խնդրէ ի մէնջ զօգուտն մեր խորհիլ և առնել...»

Թե պատմական, թե բժշկական տեսակետից հետաքրքրական է 22-րդ թուղթը, վոր գրած է «Առ վարդապետն Սարգիս առաջնորդ ուխտին Սեւանայ, քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթէ եկեացես առ իս և ի միասին գրոց պարապեսցուք»: Այս հասցեագրից յերևում է, վոր Գագիկ թագավորը հրավիրել էր Սարգիս վարդապետին միասին գրազվել զիտությունը. իմանալով այդ բանի մասին, Մագիստրոսը Սարգիսն նկարագրում է Գագիկի հիվանդությունը, վոր ըստ Մագիստրոսի, սեռական գործարանների վնասումից էր առաջ յեկել: Այս թուղթը Մագիստրոսը գրել է այն ժամանակ, յերբ նա թագավորի հալածանքներից հեռու լինելու համար ապրում էր Տարոնում: Չի կարելի Մագիստրոսի վկայությունները Գագիկի, նրա բնավորության և կրթության մասին միանգամայն անաչառ և ճշմարիտ համարել, վորովհետև թագավորը այդ ժամանակ Մագիստրոսի վոխերիմ թշնամին էր: Շատ հավանական է, վոր Մագիստրոսի ակնարկները Գագիկի սեռական թուլության մասին անհիմն են, քանի վոր դա չխանգարեց Գագիկին յերկու յերեխա ունենալ: Լեզվի կողմից Մագիստրոսի այս թուղթը գրված է առանձնապես խրթին կերպով. յերբեմն յես զիմեկ եմ իրազեկ մարդկանց այս թղթի առթիվ, խնդրելով պարզել ինձ Մագիստրոսի այս կամ այն դարձվածքը, բայց չեմ կարողացել հաջող պատասխան ստանալ: Այս թղթի մեզ հետաքրքրող տողերը ունեն հետևյալ բովանդակությունը:

«Բայց այժմ յեկ դու, վոր աեղյակ ես ամեն գիտությունների մեջ և ինձ ցանկալի յես. մեր մանկանը *) ստուգելով մենք իմացանք ամեն ինչ, ուստի յես համարձակվում եմ գրել քեզ իմ կարծիքս, քանի վոր նրա սեռական գործարանները խափանվել են, նրա կազմվածքը արդեն արական բնություն չի կրում, նա դյուրությունը իրեն կնվիրի այժմ քո վարդապետությանը, վոր նա սկսել է հավանել: Բայց ինչպես նրան պատահեց այդ հիվանդությունը, յես չգիտեմ. թե աղամարդկանց մասերից, թե արդար բնավորությունից, թե խելքից թե իմաստությունից, կամ մի վորեւ ուրիշ բանից, ինչպես և բարկությունը, կամ ցանկությունը, կամ մի տեղավորական, ազգող վորակությունը: Այդ գրության մասին հին ժամանակները ասված է յեղել եպիգրամիական մատյանի մեջ, վորի նյութը յերազնեում է տեսնված, ճուշտագային իմաստասիրությունը:**) Նա***) ասել է, վոր

*) Գր. Մագիստրոսը Գագիկ թագավորին ճեզնորեն և մանուկ անվանում, շեշտելով զրանով նրա տխմարությունը:

**) Հին յեզ միջին դարերում կարծում էին, վոր հիվանդությունների յեզ զեղերի գործածություն մասին առաջին բժիշկները ծանոթացել են յերազների մեջ. նույնպիսի մասին դարձվածքը անհասկանալի յես:

***) Նա, այսինքն եպիգրամիական մատյանի ճեզնակը՝ Գալենը:

այս հիվանդությունը առաջ է գալիս մարմնի մեջ թանձրացած սպիտակ մազ-
ձից, և հանում է հիվանդին գիտակցությունից, քանի վոր Հիպոկրատեսը
այս հիվանդությունը ցուրտ և չոր է ճանաչում: Յեվ վոչ մի հնար չկա այս
հիվանդության ժամանակ հաղթել բնությունը և կենդանի մնալ:

«Բայց ինչպես կարելի չէ առանց խզելու կամ հատելու*) հասնել
առողջության: Յեթև տղամարդկանց ցանկություն անդամն չի հասցնում
մարմնին արական գորություն, աչքերին ուժ է տալիս, այդ գորությունը
զորեղ լարմամբ տրամադրում է մտածողության, գրգռում է ուժեղ կերպով
սեռական գործարանները և առաջ բերում թեթև և յերկտրատե յերազներ,
վորից հիվանդները վախճում են դառնում և չեն կարողանում մեղը պահել,
վորովհետև այդ գորությունը յերկար է գործում, տեփողական է:

«Այս առթիվ Ռուֆորտ ասել է, վոր ցանկությունները թողում են
մարմինը և խափանելով (սեռական) գործարանի տաքությունը, սովորա-
բար աչքերի կուրություն են առաջ բերում, և մի աչքը մյուսին է տալիս
սեռական գորությունը: (Աչքերի) յերակներին այդ կարգը անցնում է
ուղեղին, վորտեղ ներվերը և յերակները մեկը մյուսի վրա յեն դորսվում.
այնտեղից նա անցնում է անուղղակի կերպով դեպի բերերը և այստեղ
աշխատում է խափանել տեսողական գորությունը: Յեվ յեթև դու ցանկա-
նաս նուրը հայացքով և ուշադրությամբ նայել հիվանդի յերեսին, մյուս
(աչքը) փակվում է:

«Յեվ պետք է զգուշ լինելով հասկանալ այս հիվանդությունը, յեն
հավատում եմ քեզ, վոր բժիշկ ես՝ հոգիներին ես մերձեցնում դեպի ծնունդ**):
Դու տեսնում ես, վոր յեթև մանկաբարձի սպիտակության պատճառով մա-
նուկը կանոնավոր չի դուրս հանվում, նրա ուղին այլ կերպ է կատարվում և
յերեսին խեղդվում է: Յեվ սրանից նախադգուշացնում է մեզ Սիսալիստը:
Բայց ավագ այդպիսի անտեղի և անզարգացած հանճարի բախտին: Թող
քո աստվածային դատողությունը չդանդաղի մեզ այդ ասել, բայց հարկա-
վոր է հասկանալ, ինչը քեզ կրկին դժգոհություն պատճառեց և գայրա-
ցրեց: Դու պետք է գրեյլը նրան՝ դյուցազն Դիոնիսիոս,***) ահա յես հավանում
եմ քեզ, վոր գտնվում ես իբրև թե հատած անդամներով, բա յյցես չեմ ցան-
կանում Ապոլոն լինել, վորպեսզի ինձ կանանց պատվելու համար տապա-
նակի մեջ դնեն և տանեն բարձրացնեն Պառնասոս: Այլ նա դեռ մարմնի
գորությունը աշխատությամբ պակասեցրեց, ապա ըստ Իսահակի վորդի ծնեց, և

*) Այսինքն, առանց անդամահատման, ոպերացիայի:

**) Այս նախադասությունը կարելի չէ հասկանալ այնպես, վոր հաս-
ցեյալները ծանոթ եր մանկաբարձության հետ:

***) Դիոնիսիոսի պաշտամունքը հին Հունաստանում, ինչպես հայտնի
չէ, պոռնկության յեվ արբեցողության պաշտամունքն էր. այս տեղը ցույց
է տալիս, վոր Մագիստրոսը շատ վատ կարծիք ուներ յերկտրատե թա-
գավորի բարոյական կյանքի մասին:

մեր Պարթևի նման*) այժմ գերադասում է ժուժկալի, բայց կարծեմ վոչ
թե յերկուսի համաձայնությունը, այլ և վոչ մեկի: Դու գրի վոր նա
սուրբ Պողոսի վարդապետություն համաձայն յուր պարտքը հատուցանե
վորքան նա կարող է և ումը պարտական է, վորպեսզի նրա պարտքը չլինի
ստիպված վոչ պարտականը հատուցանել, և վորպեսզի անմեղը չտուժի
պարտքը չկատարողի պատճառով:

«Բայց ք յերանելի իմաստություն, վորը արժանի չէ տառելի խելքին.
Յերբ պատահում է, վոր մանկական հասակից վարժվում են առանց Աս-
տծո յերկյուղի, կարծում եմ վոր վոչինչ ոգնել չի կարող: Քանի վոր չար
հիվանդությունը անձին հանդիպում է վատ կրթությունից, սովորությու-
նից և վատ սովորություններից...»:

Մենք տեսնուք այս թղթից, վոր Գագիկ թագավորը մի ինչ վոր
վնասակար հիվանդություն ուներ, վոր քայքայում է վատուժություն եր
վնասակար հիվանդություն ուներ, վորը վիրարուժական բժշկու-
տաճացրել նրա սեռական գործարաններում, վորը վիրարուժական բժշկու-
թյուն եր պահանջում: Անկարելի չէ պարզ յեղբակացություն կազմել այդ
հիվանդության եյություն մասին, քանի վոր բացի բերած անկարելիներից
հիվանդության եյություն մասին, քանի վոր բացի բերած անկարելիներից
ավելի լուրջ տվյալները պակասում են: Սակայն, քանի վոր այդ հիվան-
դությունը չխանգարեց հետագայում Գագիկին յերկու վորդի ունենալ,
պարզ է, վոր հիվանդությունը այնքան էլ բարդ չէր: Թղթում յեղած ակ-
նարկներից պարզվում է, վոր Սարգիս վարդապետն էլ ծանոթ եր բժշկու-
թյան արվեստին, և գուցե այդ եր հենց պատճառը, վոր Մագիստրոսը ցան-
կացավ նրան տեղեկացնել Գագիկի հիվանդության մասին:

39-րդ թղթում, վոր գրած է «Առ հնձացին Գրիգոր», Մագիստրոսը
պատմում է մի հայտնի բույսի մասին վոր այժմ կոչվում է լակտուկ (lac-
tucarium), և թղթի վերջը նկարագրվում է այդ բույսի զեղապիտական հատ-
կությունները: Այդ բույսի նկարագրությունը, վոր մինչև այժմ էլ, թեպետ և
սահմանափակ զեղքերում, գործ է ածվում բժշկության մեջ իբրև նարկո-
տիկ զեղ, ի հարկե զեղապիտական տեսակներից շատ թուլեցիկ և արված, սա-
կայն նա ավելորդ անգամ զալիս է հաստատելու Մագիստրոսի ծանոթու-
թյունը բժշկական հարցերի հետ: Ահա այդ թղթի մեզ հետաքրքրող մասը:

«Հազար բույսը հունարեն կոչվում է մաուր, վոր նշանակում է, վոր
այդ բույսը կարելի չէ ուտել միայն մայր և հուլիս ամիսներին: Պարսկե-
րեն նա կոչվում է քայու, վոր նշանակում է վորոտիքը փքեցնող և ուռե-
ցնող: Սերմերի մեջ մեճ և քեճ և քեճ այս բույսի բազմազան տեսակները:
Խոնավության և ցրտության աստիճանը յերկրորդն է, բայց յերկրորդից
անցնելիս նա արյունը խտակ է դարձնում, և ուղեղի վրա ազդելով մաքերը
պարզում է իր կարճ պտղով: Յեթև վոր նա սպիտակ փառ ունի, ննջեցնելով

*) Մագիստրոսը Պարթևի քառը գործ է ածում տարբեր իմաստով.
տեղ տեղ Պարթևի պիտի թարգմանվի պարսիկ, իսկ տեղ տեղ մեզ թվում
է, վոր նա նկատի ունի Պահլավունիներից մեկին, քանի վոր Պահլավուն-
յաց տոհմը Պարթևվաց ծագում ուներ:

ողտակար նիհարությունն և առաջ բերում: Հաճախ պատահում է վոր տաք ջերմության դեմ ունում է, յերբ դրած է լինում հիվանդի վերքի վրա: Նրա սերմը շափրանով խառնած և ճակատին դրած թուլացնում է տաք վերքի բորբոքումն և մեր գտած բազում սրա տեսակները ջերմերի դեմ չեն միայն ողտակար: այդ բանը ախորժելի պետք է լինի քեզ համար քո զլխի ջերմության պատճառով խելագատակն հովացնելու համար: Վուջ յեղիքս:

Այս վերջին նախադասության մեջ պատմում ենք հեղինակի անձնական կարծիքը իր գտած բակտերիաների մասին:

Պետք է ասել, վոր նման որինականների պակասությունն բնավ չկա Մազիսարոսի թղթերի մեջ: այդպես հետաքրքիր դատողություններ բժշկական հարցերի վերաբերյալ մենք գտանք 2, 19, 29, 30, 40, 67, 71 և այլ թղթերում: սակայն վորպեսզի չերկարացնենք չափից դուրս մեր հետազոտությունը, մենք այլևս չենք կանգ առնի նրանց բովանդակության վրա, հուսալով վոր ասածներս ել հերիք են աղացուցանելու համար, վոր Մազիսարոսը մեր բժշկության XI դարու վաղուց ներկայացուցիչը պետք է համարվի: անուղղակի կերպով դա հաստատվում է և նրա Պլատոնի «Թիմոսի» թարգմանությամբ: այդ գիրքը փոխառացական ձևով կաղմած բնագիտական հետազոտություն է, և ի հարկն պատահաբար չէ, վոր Մազիսարոսը կանգ է առել այդ գրքի թարգմանության վրա:

Յեղբայրակելով մեր ասածը Գ. Մազիսարոսի մասին՝ մենք տեսնում ենք, վոր նա իր բազմակողմանի գիտնականությամբ հանդերձ քաջ ծանոթ էր բժշկականությանը, հին և միջնադարյան ամենահռչակավոր բժիշկների հեղինակություններին: Նա սիրում է գրույցներ բժշկական հարցերի մասին իր թղթակիցների հետ: դասախոսելով դանազան գիտություններ իր ձեռնարանում, թվում է, վոր Մազիսարոսը ի միջի այլոց այնպեղ և բժշկական արվեստն էր սովորեցնում: Նա գիտական վիճաբանություն է սկսում հույն մասնագետ ֆիզիոլոգի հետ, և նրան դրած թղթի մեջ շատ ազատ դատողություններ է անում բժշկական հարցերի մասին, ջախջախիչ քննության և յենթարկում իր հակառակորդի կարծիքները, վոր ցույց է տալիս նրա ներհուն հմտությունը բժշկականության մեջ: Ժամանակ առ ժամանակ նա հանդիսանում է և գործնական բժշկի դերի մեջ և իր թղթակիցներին բժշկական խորհուրդներ է տալիս: Նա առաջ է բերում տեղ տեղ հիվանդությունների նկարագրեր, միշտ պահպանելով հույն բժշկության ձևերը, և տալով գիտական պաշարի նոր ապացույցներ: Մենք չենք ուզում այստեղ ասել, վոր Գ. Մազիսարոսը բժիշկ էր բառիս նեղ նշանակությամբ, նա հույն չափով բժիշկ էր, վորչափ էլ փրկափա յեր, կամ բանաստեղծ կամ քերականագետ: Միջնադարյան մտավորականությունը Մազիսարոսի ժամանակ ուսանում էր ժամանակակից մարդկությանը ծանոթ բոլոր գիտությունները, վորոնք իրենց բովանդակ ծավալով կարող էին տեղավորվել մի մարդու ուղեղի մեջ: Այդ տեսակետից Մազիսարոսը ծանոթ էր բժշկության հետ հույնչափ, վորչափ և ամեն մի բարձր դասակարգի հայ մտավորական իր ժամանակ պետք էր բժշկությունը սովորած լիներ: Ղըժ-

բախտաբար միջնադարյան հայ մտավոր դասակարգի զարգացման աստիճանի, նրա գիտական գաղափարների մասին մեզ հասած տեղեկությունները շատ սուղ են, և մենք պարզ չգիտենք այդ դասակարգի մասնակցության դերը բժշկության մեջ:

Մենք ավելի յերկար կանգ առնք Գ. Մազիսարոսի վրա, քան այդ դուցե հարկավոր էր, վորովհետև ուղեցինք միանգամայն հաստատված համարել մեր միջնադարյան այդ խոշորագույն գիտնականի նշանակությունը, մերեմս կատարած դերը բժշկության մեջ: Աչքի առաջ ունենալով այն բազմազան վերին աստիճանի հետաքրքրական գիտական նյութերը, վոր պարզված են Մազիսարոսի թղթերում, մենք հույս ունեյինք ձեռնառա մարդկանց ուշադրությունը հրավիրել մեր միջնադարյան այս դուցե ամենախոշոր գիտնականի վրա, վոր բոլոր հայագետների կողմից միանգամայն անորդարացի կերպով ներկայումս մոռացության է մատնված:

Գրառ. № 239 ր.

Տիրաժ 50

Պատ. № 4155

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0262690

